ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՇՀԾՁԲ-15/3 (ԽԱՊԱ-ՇՀԾՁԲ-16/1-Ա) ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

Ք. Վեդի **«26 » «հուլիսի » 2016թ.**

ժամը 11 ^{00}

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ *Վ.Միրզոյան*	*<<Խոսրովի անտառ>> պետական արգելոց>> ՊՈԱԿ- ի տնօրենի տեղակալ տնտեսական գծով*
Հանձնաժողովի անդամներ՝	
Բ.Շահնազարյան	*<<Խոսրովի անտառ>> պետական արգելոց>> ՊՈԱԿ-ի ավագ հաշվապահ*
Ա. Բաղդասարյան	*<<Խոսրովի անտառ>> պետական արգելոց>> ՊՈԱԿ-ի տնտեսվար պահեստապետ*
Հանձնաժողովի քարտուղար՝	
Օ. Ասատրյան	*<<Խոսրովի անտառ>> պետական արգելոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի օգնական գնումների գծով*

1. ՇՀԾՁԲ-15/3 (ԽԱՊԱ-ՇՀԾՁԲ-16/1-Ա) **ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման, գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի գնային առաջարկների արդյունքների ամփոփման) մասին.**

1.1. Գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվել են *ք.Վեդի, Կասյան 79 «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ* հասցեում:

1.2. Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները

Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Հեռախոսահամարը
«ՎԱՌՎԱՀ» ՍՊԸ	ՀՀ, Արարատի մարզ, գ. Արարատ, Գայի 26 ա	077-17-01-17

1.3. Գնային առաջարկներ ներկայացրած այլ մասնակիցներ չկան

1.4. Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

1.4.1. «ՎԱՌՎԱՀ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.5. Տվյալներ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

1.5.1. ՇՀԾՁԲ-15/3 (ԽԱՊԱ-ՇՀԾՁԲ-16/1-Ա) ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման հրավերով սահմանված «ՎԱՌՎԱՀ» ՍՊ ընկերությունը փակ կնքված ծրարով ներկայացրել էր՝ դիմում շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու, հայտարարություն շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին, հայտարարություն մասնագիտական փորձառության մասին, հայտարարություն տեխնիկական միջոցների մասին, հայտարարություն ֆինանսական միջոցների մասին, հայտարարություն աշխատանքային ռեսուրսների մասին, գնի առաջարկ, հայտարարություն առաջարկվող ապրանքների հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, հայտարարություն Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք մատակարարելու վերաբերյալ: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից, բնօրինակ փաթեթում ներառված բոլոր պատճեն հանդիսացող փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակցի կողմից:

1.6. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

1.6.1. «ՎԱՌՎԱՀ» ՍՊ ընկերության կողմից մրցույթի գնային առաջարկի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

1.7. Մասնակիցների առաջարկած գները՝

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Գնի առաջարկները (դրամ)	
			«ՎԱՌՎԱՀ» ՍՊԸ	
			Գինը	Գինը առանց ԱԱՀ
1	2	3	4	5
1	4x4 տիպի ավտոմեքենաներ (Նիվա, ՈՒԱԶ, ԶԻԼ, ԳԱԶ-66) 13 ա/մ	դրամ	4 409 500	4 409 500
2	Արտասահմանյան արտադրության մակնիշի 1ա/մ	դրամ	10 984 000	10 984 000

1.7.1. «ՎԱՌՎԱՀ» ՍՊ ընկերության կողմից մրցույթի գնային առաջարկի ինքնարժեքի հաշվարկում թվաբանական անճշտություններ չկան:

2. Հանձնաժողովը որոշեց՝

2.1 Առաջին տեղ զբաղեցրած «ՎԱՌՎԱՀ» ՍՊ ընկերության մասով ներկայացնել հարցում ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

2.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016 թվականի օգոստոսի 1-ին, ժամը 11:00-ին՝ ՀՀ բնապահպանության նախարարության *«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ ք.Վեդի, Կասյան 79* հասցեով:

2.1. Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Վ.Միրզոյան
Անդամներ՝		Բ.Շահնազարյան
		Ա. Բաղդասարյան
Քարտուղար՝		Օ. Ասատրյան: